



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

25 ՄԱՅԻՍԻ 2020թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Մանասերյանը, Գեղամ Վարդանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը և առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 25-ի թիվ 5 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի բնակավայրերի մանկապարտեզների աշխատակիցներին 2020 թվականի մայիս ամսից պարապուրդի մեջ համարելու մասին:
3. Գլաձոր համայնքի բնակավայրերի մանկապարտեզների մարտ ամսվա վարձավճարների գծով արտոնություն սահմանելու մասին:
4. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով ձեռք բերված դիզելային վառելանյութից <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ին տրամադրելու մասին:
5. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող թփուտները կտրելու համար թույլտվություն տալու մասին:
6. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 15 հա արոտավայրը վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:

Կողմ-9	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 48/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԻՑ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 186-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի դեպքերի տարածումը՝ անորոշ ժամանակով դադարեցնել Գլաձոր համայնքի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատանքային գործունեությունը և աշխատակիցներին 2020 թվականի մայիս ամսից համարել պարապուրդում: